

ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՇՄԼԵՊԾ-ՅՄԱԾԶԲ-25/01

բ. Երևան

«08» ապրիլի 2025 թ.

Շրջակա միջավայրի նախարարության Էկոպարեկային ծառայությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Լ. Ալեքսանյանի, ով գործում է ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Կարեն Հարությունյանին, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է «Վարչարարության համակարգչային ծրագրային փաթեթների ծառայություններ» մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրին համախառասխան և N 2 հավելվածով սահմանված ծառայության մատուցման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 և/կամ N 2 հավելվածին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 և/կամ N 2 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

* լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:

2.4.1 Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված «5» աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 75 000 000 (յոթանասուն հինգ միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն մատուցված ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա 25.12.2025թ

• ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում

նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:¹ Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:²

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Պատվիրատուի կողմից ստորագրվելու պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՅԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

**Շրջակա միջավայրի նախարարության
Էկոպարեկային ծառայություն**

ք.Երևան, Արմենակյան 129
ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900001010538
ՀՎՀՀ 00476409

Շրջակա միջավայրի նախարարության
Էկոպարեկային ծառայության գլխավոր քարտուղար

L. Ալեքսանյան



Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Էյչ Գրուպ» ՍՊԸ

ՀՎՀՀ 01254973

Բանկ՝ «Արմսվիսբանկ» ՓԲԸ

ՀՀ 2500010488760100

տնօրեն

Կարեն Հարությունյանին



(ստորագրություն)

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
 « 08 » ամիս 2025 թ. կնքված
 ՇԱՆ 378-ՉՍԿԾՁԳ-25701 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ՀՀ դրամ

Ծառայության			
Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Ամբողջական անվանումը	Տեխնիկական բնութագիրը
1	48211240	վարչարարության համակարգչային ծրագրային փաթեթներ	Կցվում է

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ԿԱՏԱՐՈՂ

**Շրջակա միջավայրի նախարարության
 Էկոպարեկային ծառայություն**

ք.Երևան, Արմենակյան 129
 ՖՆ գործառնական վարչություն
 ՀՀ 900001010538
 ՀՎՀՀ 00476409

Շրջակա միջավայրի նախարարության
 Էկոպարեկային ծառայության գլխավոր քարտուղար

L. Ալեքսանյան



«Էլջ Գրուպ» ՍՊԸ

ՀՎՀՀ 01254973

Բանկ՝ «Արմսվիսթանկ» ՓԲԸ

ՀՀ 2500010488760100

տնօրեն

Կարեն Հարությունյան



Տեսակը՝ վարչարարության համակարգչային ծրագրային փաթեթ

● Բջջային հավելված (պետք է տեղադրվի էկոպարեկային ծառայողներին (այսուհետ՝ ծառայող) տրամադրվող Android օպերացիոն համակարգով գործող պլանշետների մեջ)

● Տվյալների կառավարման վեբ համակարգ (պետք է տեղադրվի Պատվիրատուի սերվերային համակարգում)

Ընդհանուր պահանջներ՝

Համակարգի նպատակը. Թվայնացնել իրավախախտումների վերաբերյալ կազմվող արձանագրությունների հետ կապված աշխատանքները:

Համակարգի արագագործությունը՝ Համակարգը պետք է ապահովի արագ արձագանքման ժամանակ և բարձր արդյունավետություն:

Ինտերֆեյսը՝ Համակարգը պետք է ունենա օգտագործողի համար հեշտ կիրառելի և ինտուիտիվ ինտերֆեյս:

Օրենսդրական համապատասխանությունը՝ Համակարգը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրությամբ և ՇՄՆ ներքին ակտերով սահմանված պահանջներին:

Անվտանգությունը՝ Համակարգը պետք է ապահովի տվյալների գաղտնիությունը, ամբողջականությունը և հասանելիությունը՝ հաշվի առնելով ՀՀ օրենսդրության պահանջները և լավագույն միջազգային գործելակերպը:

Գործառույթային պահանջներ՝

Էկոպարեկային ծառայության վարչական իրավախախտումների կառավարման էլեկտրոնային համակարգը պետք է իր մեջ ներառի հետևյալ մոդուլները՝

1. Համակարգի օգտվողների կառավարման մոդուլ

Այս մոդուլի շնորհիվ պետք է հնարավորություն տրվի համակարգ մուտքագրել/ներմուծել ՇՄՆ Էկոպարեկային ծառայության այն բոլոր աշխատակիցներին (թե՛ հիմնական և աջակցող մասնագիտական ստորաբաժանումների, թե՛ տարածքային ստորաբաժանումների), ովքեր պետք է հասանելիություն ունենան նշված համակարգին:

Մուտքագրման ընթացքում պետք է սահմանվեն նրանց դերերն ու թույլտվությունները համակարգի շրջանակներում: Պատվիրատուն պետք է հնարավորություն ունենա ստեղծել նոր դերեր՝ ներառելով անհրաժեշտ թույլտվությունները:

Բացի աշխատակիցների անձնական և ծառայողական տվյալներից, պետք է նաև տեղեկատվություն պահվի նրանց արձակուրդների , աշխատանքից ազատման և ծառայողական պարտականությունների կատարումից դուրս լինելու այլ հանգամանքների մասին, որպեսզի սահմանափակվի նրանց մուտքը համակարգ, ինչպես նաև կարգախմբերի ձևավորման ընթացքում համակարգը թույլ չտա ընդգրկել ծառայողական պարտականությունների կատարումից դուրս գտնվող աշխատողներին:

Համակարգ մուտք գործելու համար բոլոր օգտվողները պետք է ունենան օգտանուն և գաղտնաբառ, որը կհանդիսանա նրանց ՀԾՀ-ն: Առաջին անգամ համակարգ մուտք գործելուց հետո համակարգը պետք է պարտադրի բոլոր օգտվողներին փոխել իրենց գաղտնաբառերը: Նաև Ադմինիստրատորը պետք է հնարավորություն ունենա անհրաժեշտության դեպքում կատարել օգտվողների գաղտնաբառի վերականգնում, ինչպես նաև բլոկավորել և ապաբլոկավորել օգտվողների մուտքը համակարգ:

Համակարգում պետք է լինեն հետևյալ մոդուլները՝

2. Քարտեզների մոդուլ

Այս մոդուլի շնորհիվ պետք է հնարավորություն տրվի համակարգ ներմուծել էկոպարեկային ծառայության կողմից տրամադրված Պետական անտառների, անտառային հողերի և բնության հատուկ պահպանվող տարածքների քարտեզները, որոնց միջոցով համակարգը կկարողանա ինքնաշխատ կերպով գեոտեղորոշման տվյալների հիման վրա ցույց տալ իրավախախտման արձանագրման վայրը՝ ներառյալ անտառպետությունը, անտառամասը, տեղամասը, պահաբաժինը:

Քարտեզները պետք է ներառեն հետևյալ շերտերը՝

- << վարչատարածքային բաժանումը ըստ մարզերի
- Ծառայության իրականացման երթուղիները ըստ մարզային վարչությունների և տեղամասերի
- Էկոպարեկային ծառայության կառուցվածքային բաժանումը ըստ մարզային վարչությունների և տեղամասերի
- Հայաստան ՊՈԱԿ-ի «անտառտնտեսություն» մասնաճյուղերի տարածքները՝ բաժանված

անտառապետությունների, պահաբաժինների, քառակուսիների և հատվածների

● Բնության հատուկ պահպանվող տարածքները՝ բաժանված տեղամասերի, պահաբաժինների, հատվածների, ինչպես նաև բնության հատուկ պահպանվող տարածքի գոտիների

3. Ավտոպարկի մոդուլ

Այս մոդուլի շնորհիվ պետք է ստեղծվի այն բոլոր ծառայողական ավտոմեքենաների ցանկը, որոնք կցվում են կարգախմբերին: Յուրաքանչյուր մեքենայի համար պետք է նշվի որոշակի բնութագրող դաշտեր, ինչպես օրինակ Պետ. համարանիշ, բորտի համար, մոդել, մակնիշ և այլն, ինչպես նաև անպայման պետք է նշվի թե, որ մարզային վարչության կամ տեղամասի կողմից է օգտագործվում, որպեսզի կարգախմբեր կազմելիս բացառվի սխալ ավտոմեքենայի կցումը: Նաև յուրաքանչյուր ավտոմեքենային պետք է կցվի պլանշետ՝ նշելով նրա չկրկնվող IMEI կոդը:

4. Կարգախմբերի մոդուլ

Այս մոդուլի շնորհիվ պետք է հնարավորություն տրվի ստեղծել ծառայություն իրականացնող կարգախմբերի ցանկը՝ թե ամենօրյա ռեժիմով, թե նախապես՝ ցանկացած ժամանակահատվածի համար:

Կարգախմբերում պետք է հնարավոր լինի կցել առնվազն 2 ծառայող, որոնցից մեկը նշանակվում է Կարգախմբի ավագ, և նշել կամ ընտրել ծառայության օրը և հերթափոխը, որը կազմում է 8ից 24 ժամ: Կարգախմբեր կազմելիս պետք է նաև հնարավոր լինի կարգախմբին կցել տվյալ տեղամասին պատկանող ավտոմեքենաներից մեկը: Ծառայողների և ավտոմեքենայի ընտրության ժամանակ պետք է հաշվի առնվի նրանց հասանելիությունը ընտրված հերթափոխում:

Նաև հերթափոխի բոլոր կարգախմբերի անդամներից մեկը նշանակվում է տվյալ հերթափոխի ավագ:

5. Խախտումների վերաբերյալ արձանագրությունների կազմման մոդուլ (բջջային հավելվածի համար)

Այս մոդուլը պետք է հնարավորություն տա ծառայություն իրականացնող ծառայողներին իրենց մոտ առկա պլանշետներում տեղադրված հատուկ բջջային հավելվածի միջոցով կազմել արձանագրություններ, ընդ որում պետք է հնարավորություն տրվի արձանագրությունը կազմել ոչ միայն առցանց ռեժիմում, այլ նաև օֆլայն (այսինքն՝ ցանցի բացակայության) ռեժիմում՝ մուտքագրած տեղեկատվությունը պահելով լոկալ հիշողության մեջ այնքան ժամանակ, մինչև կապի վերականգնումից հետո հնարավոր կդառնա տվյալների փոխանցումը սերվերին:

Նշված բջջային հավելվածը պետք է ապահովի խախտումների վերաբերյալ հետևյալ 2 արձանագրությունների կազմումը՝

Ա) Պետական անտառներում, անտառային հողերում և բնության հատուկ պահպանվող տարածքներում պահպանության և անտառային ու բնության հատուկ պահպանվող տարածքների օրենսդրության խախտումների

վերաբերյալ արձանագրության ձև (համաձայն շրջակա միջավայրի նախարարի 2024 թվականի մարտի 22-ի «Պետական անտառներում, անտառային հողերում և բնության հատուկ պահպանվող տարածքներում պահպանության և անտառային ու բնության հատուկ պահպանվող տարածքների օրենսդրության խախտումների վերաբերյալ արձանագրության ձևը և տրամադրելու կարգը հաստատելու մասին» N 87-Ն հրամանի)

Բ) Արձանագրություն վարչական իրավախախտման վերաբերյալ (համաձայն վարչական իրավախախտումների վերաբերյալ հայաստանի հանրապետության օրենսգրքի):

Կազմված արձանագրությունները պետք է համակարգի կողմից ավտոմատ ստանան հերթական համար՝ հաշվի առնելով մարզային վարչության տեղամասի իդենտիֆիկատորները:

Արձանագրություն կազմելու ընթացքը պետք է հնարավորինս պարզեցված լինի ծառայողների համար՝ հնարավորություն տալով տեղեկատվության մի մասը ընտրել նախապես կազմված ցուցակներից, և ոչ թե լրացնել ձեռքով:

Հաշվի առնելով, որ արձանագրության կազմումը կարող է երկար տևել, համակարգը պետք է հնարավորություն տա այն պահպանել սևագիր տարբերակով, հետո շարունակել և հասցնել ավարտին:

Արձանագրություն կազմելիս պետք է հնարավորություն տրվի ծառայողին պլանշետի միջոցով իրավախախտման վայրում կատարել լուսանկարահանում և այդ լուսանկարները կցել արձանագրությանը՝ յուրաքանչյուր լուսանկարի վերաբերյալ ընտրելով համապատասխան նկարագիրը: Նշված լուսանկարների բազան հետագայում կարող է օգտագործվել մեքենայական ուսուցման միջոցով Հայաստանի կենդանատեսակները և բուսատեսակները ճանաչող արհեստական բանականություն ստեղծելու համար, հետևաբար լուսանկարները պետք է պահվեն բարձր որակով և առանց ձևափոխությունների:

Արձանագրությունների էլեկտրոնային ձևերը պետք է ներառեն նաև պլանշետի միջոցով ստորագրելու հնարավորություն (ոչ պարտադիր տարբերակով), որը հետագայում թույլ կտա էկոպարեկային ծառայությանը արձանագրության թղթային տարբերակից անցում կատարել ամբողջությամբ էլեկտրոնային տարբերակի:

6. Ինտեգրումների մոդուլ

Այս մոդուլի շնորհիվ արձանագրություն կազմելիս համակարգը պետք է հնարավորություն տա նույնականացնել իրավախախտ ֆիզ.անձին (եթե հանդիսանում է ՀՀ քաղաքացի) կամ իրավաբանական անձին, ինչպես նաև նրանց տրանսպորտային միջոցները՝ ինտեգրվելով հետևյալ շտեմարանների հետ.

- Անձնագրերի և վիզաների վարչության տվյալների բազա
- Իրավաբանական անձանց պետական ռեգիստր
- ՀՀ-ում հաշվառված ՏՄ-ների բազա

Ֆիզ.անձի նույնականացումը կարող է իրականացվել նկարի, անուն ազգանունի կամ անձը հաստատող փաստաթղթերի հիման վրա, իսկ իրավաբանական անձի նույնականացումը՝ կամակերպության անվամբ, ՀՎՀՀ-ի կամ գրանցման համարի հիման վրա:

Տվյալ շտեմարանների հետ ինտեգրվելու համար անհրաժեշտ թույլտվությունների ստացումը կապահովվի Պատվիրատուի կողմից:

7. Վնասի հաշվարկի մոդուլ

Այս մոդուլի շնորհիվ համակարգը պետք է հաշվարկի իրավախախտման արդյունքում կենդանական կամ բուսական աշխարհին պատճառված և փոխհատուցման ենթակա վնասի չափը:

Հաշվարկը պետք է կատարվի համաձայն «Բնապահպանական իրավախախտումների հետեվանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին» օրենքի:

8. Հաշվետվությունների մոդուլ

Այս մոդուլի շնորհիվ համակարգը պետք է հնարավորություն տա կազմել հետևյալ հաշվետվությունները՝

- Արձանագրությունների վերլուծություն ըստ մարզային վարչությունների (ֆիլտրման հնարավորությամբ)
- Արձանագրությունների վերլուծություն ըստ մարզային վարչությունների տեղամասերի (ֆիլտրման

հնարավորությամբ)

- Արձանագրությունների վերլուծություն ըստ իրավախախտման տեսակների (ֆիլտրման հնարավորությամբ)
- Արձանագրությունների վերլուծություն ըստ ծառայողների (ֆիլտրման հնարավորությամբ):

Բոլոր հաշվետվությունները պետք է հնարավոր լինի ֆիլտրել ըստ ժամանակահատվածի, մարզային վարչության և տեղամասերի, ծառայողների, իրավախախտման տեսակների և արձանագրությունում լրացված այլ դաշտերի:

Նշված հաշվետվությունները պետք է գեներացվեն ըստ նախապես որոշված ձևաչափի, ինչպես նաև պետք է դրանց .docx (Word), .xlsx (Excel) և .pdf (PDF) ձևաչափերով ֆայլերի ստացման հնարավորություն տրվի:

9. Տեղեկատուների կառավարման մոդուլ

Այս մոդուլի շնորհիվ համակարգի Ադմինիստրատորին հնարավորություն կտրվի կազմել և կառավարել հետևյալ տեղեկատուները՝

- Թույլտվություններ
- Դերեր
- Օգտվողներ
- Մարզային վարչություններ/տեղամասեր
- Անտառպետություններ/անտառամասեր/տեղամասեր/պահաբաժիններ, քառակուսիներ, հատվածներ,

գոտիներ

- Հերթափոխներ
- Ավտոմեքենաներ
- Կենդանատեսակներ
- Բուսատեսակներ
- Առգրավված առարկաներ
- Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի դրույթներ
- «Բնապահպանական իրավախախտումների հետեվանքով կենդանական և բուսական աշխարհին

պատճառված վնասի հատուցման սակագների մասին» օրենքի դրույթներ

10. Գործողությունների լրգավորման մոդուլ

Այս մոդուլի շնորհիվ համակարգը պետք է հնարավորություն տա լրգավորել օգտվողների կատարած գործողությունների պատմությունը:

Տեխնիկական պահանջներ՝

Տվյալների գաղտնագրում. Բոլոր տվյալները, որոնք փոխանցվում են բջջային հավելվածի և վեբ համակարգի միջև, պետք է գաղտնագրվեն՝ օգտագործելով արդիական ստանդարտներ (օրինակ՝ TLS/SSL):

Տվյալների պահպանում. Պետք է իրականացվի տվյալների պարբերական պահպանում՝ տվյալների կորստի կանխարգելման համար:

Մասշտաբելիություն. Համակարգը պետք է լինի մասշտաբելի՝ ապագայում աճող բեռնվածությանը դիմակայելու համար:

Թեստային միջավայրի ապահովում. Համակարգը պետք է ունենա թեստային միջավայր, որտեղ հնարավոր կլինի թեստավորել համակարգի աշխատանքը:

Համակարգի գործարկման և սպասարկման պահանջներ՝

Համակարգի գործարկումից առաջ Կատարողը պարտավոր է.

- իրականացնել Պատվիրատուի՝ տվյալ համակարգի համար պատասխանատու աշխատակիցների

(առավելագույնը 10 անձ) ուսուցում

- տրամադրել օգտվողի ձեռնարկ և համակարգի ճարտարապետության վերաբերյալ տեխնիկական նկարագիր՝

- Պատվիրատուին հանձնել համակարգի ծրագրային կոդը (source code)՝ օգտագործման իրավունքով:

Համակարգի ընդունումից հետո կատարողը նաև պարտավոր է իրականացնել անվճար երաշխիքային սպասարկում 12 ամիս տևողությամբ:

Սպասարկման շրջանակում Կատարողը պարտավոր է Պատվիրատուին տրամադրել այն անձանց տվյալները, ովքեր իրականացնելու են սպասարկումը, իսկ Պատվիրատուն պարտավոր է տրամադրել այն լիազորված անձանց տվյալները, ովքեր իրավունք ունեն Պատվիրատուի անունից դիմել սպասարկող ընկերությանը:

Սպասարկման մեջ պետք է ներառվեն հետևյալ ծառայությունները՝

- Խորհրդատվության տրամադրում

- Համակարգում առկա ծրագրային խնդիրների (bug) շտկում

● Իրավական ակտերով կարգավորվող ծրագրային մոդուլներում այնպիսի փոփոխությունների կատարում, որոնք կբխեն իրավական ակտերում կատարված փոփոխություններից

● Ծրագրային մոդուլներում օգտագործված գրադարանների թարմացում անվտանգության հետ կապված խոցելիություններ հայտնաբերելու դեպքում

- Սերվերի մոնիթորինգ և անխափան աշխատանքի ապահովում

- Սերվերի օպերացիոն համակարգի թարմացում անվտանգության հետ կապված խոցելիություններ

հայտնաբերելու դեպքում

- Տվյալների բազայի մոնիթորինգ և անխափան աշխատանքի ապահովում:

Սպասարկման տրամադրման օրեր և ժամեր.

Սպասարկումը պետք է իրականացվի Երկ-Ուրբ (բացի պետական ոչ աշխատանքային օրերից) 09:00-18:00

Ժամային գրաֆիկով:

Սպասարկման տրամադրման եղանակներ.

- Հեռախոսով

- Էլ-փոստով

- Առցանց կապի միջոցներով

Համակարգի գործարկման համար Կատարողը պետք է նաև մատակարարի սերվերային համակարգ հետևյալ տեխնիկական բնութագրով՝

Սերվեր.

DELL PowerEdge R760xs

Տեխնիկական մանրամասներ

Մատակարարվող սերվերը պետք է համապատասխանի առնվազն հետևյալ պահանջներին

Սերվերը պետք է ունենա՝

" Ստանդարտ սերվերային դարակում տեղադրելու համար և ունենա բարձրություն՝ ոչ ավելի քան 2Ս

" Առնվազն x8 կրիչներ 2,5" SATA/SAS

" Դարակում տեղադրելու համար ունենա հեռադիտակային ուղղորդիչների հավաքածու

" Մալուխների հավաքածու էլեկտրաէներգիայի ցանցին միացնելու համար

" Բանալիով կողավող առջևի վահանակ, որը սահմանափակում է կոշտ սկավառակների հասանելիությունը

" Առնվազն 2 (երկու) մոդուլի տեղադրման հնարավորություն M. 2 ձևի գործնով SSD-ներով՝ յուրաքանչյուրը առնվազն 480 ԳԲ-ից ոչ պակաս ծավալով, որոնք պետք է տեղադրված լինեն մոդուլի պատյանի ներսում և աջակցեն առնվազն RAID-1 ապարատային ռեժիմի աշխատանքին և աջակցեն դրանց վրա O.C-ի կամ հիպերվիզորի տեղադրմանը և բեռնմանը: Ընդ որում մոդուլը չպետք է զբաղեցնի լրացուցիչ PCIe-ադապտերների տեղադրման համար նախատեսված բնիկները

- Պետք է հնարավոր լինի տեղադրել անլար տվյալների փոխանցման մոդուլով հաղորդիչ, որն ապահովում է մուտք դեպի սերվեր սմարթֆոններից և ցանկացած շարժական սարքերից՝ սերվերի կոնֆիգուրացիայի տվյալները և սերվերի ախտորոշումը ստանալու համար

- Պետք է ունենա իրանի բացման սենսոր՝ որը թույլ կտա այս իրադարձության մասին հեռակա ծանուցման կարգաբերում

- Սերվերը պետք է ունենա առնվազն երկու պրոցեսոր, որոնցից յուրաքանչյուրը ունի առնվազն 16 միջուկ, որոնք աշխատում են առնվազն 2,0 ԳՀբ բազային հաճախականությամբ, աջակցում են հիշողության աշխատանքին առնվազն 4400 ՄՀց հաճախականությամբ և ունեն առնվազն 30 ՄԲ քեշի հիշողություն: Պրոցեսորի առավելագույն էներգիայի սպառումը պետք է լինի ոչ ավելի, քան 150 Վտ

- Պետք է ունենա առնվազն մինչև 16 հիշողության մոդուլների տեղադրման հնարավորություն, որոնք պետք է աշխատեն առնվազն 5600 ՄՀց հաճախականությամբ

- Սերվերում պետք է տեղադրված լինի առնվազն x4 RDIMM հիշողության մոդուլներ՝ յուրաքանչյուրը առնվազն 16 ԳԲ հզորությամբ, որոնք աշխատում են առնվազն 5600 ՄՀց հաճախականությամբ:

- Սերվերում պետք է տեղադրված լինի առնվազն x2 SSD տիպի սկավառակ, առնվազն 1,92 ՏԲ SATA Read Intensive

Սերվերում պետք է տեղադրված լինի RAID կարգավորիչ առնվազն հետևյալ բնութագրիչներով՝

" RAID մակարդակները՝ 0, 1, 5, 6, 10, 50, 60

" Pass-through/ոչ RAID ռեժիմ

" NV քեշ առնվազն 8ԳԲ DDR4

" Սկավառակի աջակցություն առնվազն՝ 3 Գբիտ/վ SATA, 6 Գբ/վ SATA/SAS և 12 Գբ/վ SAS

- Պետք է ունենա առնվազն LOM ցանցային ադապտեր առնվազն երկու հատ 1 ԳբԷ պորտով: Ցանցային ադապտերը չպետք է զբաղեցնի լրացուցիչ PCIe ադապտերներ տեղադրելու համար նախատեսված սլոտներ

- Պետք է ունենա հատուկ 1 ԳբԷ ցանցի պորտ՝ սերվերի կառավարման և մոնիտորինգի կարգավորիչին միանալու համար

- Պետք է ունենա առնվազն x3 (երեք) USB պորտ (x1 USB 2.0 առջևի վահանակում, x1 USB 3.0 և x1 USB 2.0 սերվերի հետևի մասում)

- Առջևի վահանակի վրա պետք է ունենա առնվազն մեկ x1 միկրո USB պորտ՝ սերվերի կառավարման և մոնիտորինգի կարգավորիչին ուղղակի միանալու համար

- Պետք է ունենա առնվազն երկու Platinum սնուցման աղբյուր՝ յուրաքանչյուրը առնվազն 800 Վտ հզորությամբ, տաք փոխարինվող, էլեկտրաէներգիայի պահուստային աջակցություն

- Պետք է ունենա հեռադիտակային ռեյսերի հավաքածու դարակաշարերի մեջ տեղադրման համար
- Պետք է համատեղելի լինի առնվազն հետևյալ օպերացիոն համակարգերի և հիպերվիզորների հետ
 - " Microsoft Windows Server 2019, 2022
 - " Red Hat Enterprise Linux 7.9, 8.2, 8.3
 - " VMware ESXi 6.7 U3, 7.0 U1, 7.0 U2
 - " Ubuntu 20.04
 - " Citrix XenServer 8.2 LTSR
 - " Novell SuSE Linux Enterprise Server 15 SP2

• Պետք է ունենա ներկառուցված ապարատային և ծրագրային ապահովման հեռակառավարման և մոնիտորինգի գործիքներ, որոնք ապահովում են առնվազն հետևյալ գործառույթները՝

" Հեռավար մուտք դեպի հաշվողական հանգույցի կառավարման վահանակ վեբ բրաուզերների միջոցով, հրամանի տող ինտերֆեյսի միջոցով ssh և telnet, IPMI և Redfish արձանագրություններ

" Էլեկտրոնային փոստի միջոցով ավտոմատ կերպով տեղեկացնել ադմինիստրատորին սկավառակի ենթահամակարգի, հիշողության մոդուլների, սնուցման սարքերի, հովացուցիչների և պրոցեսորների անսարքության բոլոր անհաջողությունների և կանխատեսումների մասին կամ ցուցադրել հաղորդագրություն ադմինիստրատորի վահանակում

" Ցուցադրել հաշվողական հանգույցի տեղադրված բաղադրիչների մասին տեղեկատվություն, ներառյալ սերվերի բաղադրիչների տեղադրված միկրոկոդի տարբերակների մասին տեղեկատվությունը, MAC հասցեների և ցանցային կարգավորիչների և FC ադապտերների WWN-ի մասին տեղեկատվություն, ներառյալ նաև վիրտուալ

" Հեռավար վերագործարկում, հաշվողական հանգույցի միացում/անջատում (ներառյալ վիրտուալ օպտիկական սկավառակից բեռնումը)

" Համակարգչային հանգույցի (վիրտուալ կոնսոլ) կառավարման վահանակի հեռավար էկրան, ստեղնաշար և գրաֆիկական ցուցիչ ինչպես հաշվարկային հանգույցի բեռնման փուլում, այնպես էլ գործառնական համակարգերի գործարկման ժամանակ: Վիրտուալ կոնսոլը պետք է կարողանա վերահսկել հաշվողական հանգույցի հզորությունը, բեռնման սարքը նշելու հնարավորությունը, առնվազն մինչև 6 օգտվողի միաժամանակյա միացումով և հաղորդագրությունների ռեժիմում փոխազդեցությամբ: Վիրտուալ վահանակը պետք է աջակցի վեբ բրոուզերին և HTML5 ստանդարտին՝ առանց Java և ActiveX հավելվածների անհրաժեշտության

" Սերվերի կենտրոնական պրոցեսորի և RAM-ի օգտագործման մակարդակի մասին տեղեկատվություն հավաքելու ունակություն՝ առանց OS-ում առանց այլ օժանդակ ծրագրակազմի տեղադրման անհրաժեշտության

• Համակարգչային հանգույցի շասսիի ներսում տեղադրված RAID կարգավորիչները կառավարելու հնարավորություն՝ վեբ ինտերֆեյսի կամ կառավարման մոդուլի հրամանի միջերեսի միջոցով՝ առանց O<-ում առանց այլ օժանդակ ծրագրակազմ տեղադրելու անհրաժեշտության: Նվազագույնը պետք է հնարավոր լինի՝

" RAID կարգավորիչը կառավարելու ունակություն՝ առանց հաշվողական հանգույցի վերագործարկման անհրաժեշտության

" RAID կարգավորիչին միացված կրիչների կարգավիճակի մոնիտորինգ, ներառյալ և NVMe կրիչներ

" Վիրտուալ սկավառակների կարգավիճակի մոնիտորինգ

" Վիրտուալ սկավառակների ստեղծում, ջնջում և կարգավորում

" RAID վերահսկիչի կարգավորումների փոփոխում

" Վիրտուալ սկավառակների հզորության ընդլայնում՝ առանց դրանց հասանելիության ընդհատման

" RAID մակարդակի փոփոխության հնարավորության առանց դրանց հասանելիության ընդատման

- Հաշվողական հանգույցի, դրայվերների կոնֆիգուրացիան ձայնագրելու հնարավորություն, համակարգչային հանգույցի կրկնօրինակ պատկերի պահպանման հնարավորություն՝ համակարգչային հանգույցի պատյանում կամ ցանցային ֆայլի ռեսուրսի վրա տեղադրված ոչ անկայուն կրիչների վրա խնդիրների դեպքում վերագործարկման համար

- Համակարգի ծախսողման նկարագրության էկրանի սքրինշոթը ախտորոշիչ տեղեկատվության ելքով պահելու հնարավորություն

- Համակարգչային հանգույցի վիճակի մասին ախտորոշիչ տեղեկատվություն արտահանելու ունակություն, ներառյալ տեղեկամատյանները ինչպես սերվերի կառավարման մոդուլից, այնպես էլ օպերացիոն համակարգից կամ հիպերվիզորի տեղեկամատյաններից, վեբ ինտերֆեյսի կամ հրամանի տողի միջերեսի միջոցով, մեկ միասնական հաշվետվությամբ

- Օպերացիոն համակարգի տեղադրմանը նախապատրաստվելու համար ապարատային և ծրագրային ապահովման օգտագործման ունակություն, որոնք չեն պահանջում արտաքին պահեստային կրիչների օգտագործում

- Միկրոկոդի թարմացումները հաշվողական հանգույցի բաղադրիչներին կիրառելու ունակություն ինչպես սերվերի կառավարման մոդուլի միջերեսի, այնպես էլ աջակցվող օպերացիոն համակարգերի միջոցով

- Սերվերի կառավարման մոդուլը պետք է ունենա գործառույթ՝ թարմացման նախապատրաստման փուլում միկրոկոդերի թարմացման փաթեթների ամբողջականությունն ու անփոփոխելիությունը ստուգելու համար

Սերվերային պահարան նախատեսված սերվերային և ցանցային սարքավորումների տեղադրման համար
Rack cabinet 42U/800X1200

Տեխնիկական բնութագրեր

Պահարանի տեսակը

- Հատակի

Չափս

- Առնվազն 19"

Բարձրություն

- Առնվազն 42U

Չափերը

- Առնվազն (L x Խ x Բ) 800 x 1200 x 2126 մմ

Աշխատանքային խորություն

- Առնվազն 1120 մմ

Առավելագույն ստատիկ ծանրաբեռնվածություն

- Առնվազն 1200 կգ

Նյութ

- Բարձրորակ պողպատ

Մետաղի հաստություն

Շրջանակ

- Առնվազն 1.5 մմ

Ուղեցույցներ

- Առնվազն 2 մմ

Վերին և ստորին վահանակներ

- Առնվազն 1.5 մմ

Կողային վահանակներ

- Առնվազն 1.2 մմ

Դռներ

- Առնվազն 1.2 մմ

Գույնը

- Համաձայնեցնել պատվիրատուի հետ Սև (RAL9004)

Պաշտպանության աստիճան

- Առնվազն IP20

Առջևի դուռ

- Միաթև, փորվածքով, բացման անկյունը՝ առնվազն 215°

Հետևի դուռ

- Փորվածքով, միաթև

Օդափոխություն

- Վերին վահանակը հագեցած է առնվազն 4 հատ 230Վ օդափոխիչներով՝ ջերմաստիճանի կարգավորիչով LED

պանելով

Մալուխների անցքեր

- Առնվազն վերին և ստորին վահանակներում կարգավորելի անցքեր

Լրացուցիչ պարագաներ (ներառված են) առնվազն

- Հողակցման հավաքածու
- Ուղղահայաց մալուխների կազմակերպիչներ
- Ամրացնող պտուտակներ (M6 պտուտակներ և ընկույզներ)
- Փականներ առջևի, հետևի դռների և կողային վահանակների համար
- Անիվներ արգելակով և կարգավորելի ոտքեր

Սերտիֆիկացում և ստանդարտներ

Սերվերային պահարանը պետք է համապատասխանի առնվազն հետևյալ ստանդարտներին

- ANSI/EIA RS-310-D
- IEC297-2
- DIN41491/PART1
- DIN41494/PART7
- ETSI

Պահարանը պետք է մատակարարվի ապամոնտաժված (Flat Pack) վիճակում, ինչը հեշտացնում է դրա փոխադրումն ու պահեստավորումը: Այն պետք է հեշտությամբ հավաքվի՝ շնորհիվ լավ մշակված կառուցվածքի և կցված հրահանգների:

APC Smart-UPS 2200VA

Անխափան սնուցման սարք

Ընդհանուր հատկանիշներ

Գնահատված / ակտիվ ելքային հզորություն

- Առնվազն 2200 VA / 1980 Վտ

Տեխնոլոգիա

- Առնվազն Line-Interactive

Լարման ալիքի տեսակը

- Սինուսային

Փոխանցման ժամանակը

Առնվազն 6 մս (միջին), 10 մս (առավելագույն)

Մուտքային տվյալներ

Մուտքային լարում

- 230Վ

Մուտքային լարման տիրույթ

- Առնվազն 160 – 286Վ

Կարգավորելի լարման տիրույթ

- Առնվազն 151 – 302Վ

Մուտքային հաճախականություն

- 50/60 Հց \pm 3 Հց

Մուտքային միակցիչներ տեսակ

- Առնվազն IEC-320 C20, Schuko CEE 7 / EU1-16P, British BS1363A

Մարտկոցի տվյալներ

Տեսակը

- Կնքված արտահոսքի պաշտպանվածությամբ կապարաթթվային (Sealed Lead-Acid)

Փոխարինվող մարտկոց

- Առնվազն RBC55

Վերալիցքավորման ժամանակը

- Մոտավորապես 3 ժամ

Մարտկոցի կյանքի տևողությունը

- Առնվազն 3 – 5 տարի

Աշխատանքային ժամանակ (Runtime)

- Լրիվ բեռնվածության (առնվազն 1980 Վտ) ժամանակ առնվազն՝ ~8.7 ժամ

- Կես բեռնվածության (առնվազն 990 Վտ) ժամանակ առնվազն՝ ~25 ժամ

Ֆիզիկական տվյալներ

Չափեր

- Առնվազն (Բ x Լ x Հ)՝ 43.5 սմ x 19.7 սմ x 54.4 սմ

Քաշ

- Առնվազն 50.2 կգ

Միակցիչներ

Ելքային միակցիչների առնվազն

- 8 x IEC 320 C13

- 1 x IEC 320 C19

- 2 x IEC Jumpers

Մուտքային միակցիչ առնվազն

- 1 x IEC 320 C20

Կառավարում և Մոնիտորինգ

Կապի միջերեսներ

- Առնվազն USB, Serial (RJ-45), SmartSlot, SmartConnect

Կառավարման պանել

- Առնվազն LCD էկրան՝ կարգավիճակի և մոնիտորինգի համար

Աուդիո ազդանշաններ

- Առնվազն էլեկտրական խափանումների դեպքում նախազգուշացում

Շրջակա միջավայրի պահանջներ

- Աշխատանքային ջերմաստիճան առնվազն՝ 0 – 40°C

- Պահպանման ջերմաստիճան առնվազն՝ -15 – 45°C

Հավաստագրեր

- Առնվազն CE, CSA, GOST, UL 1778, VDE

Անխափան սնուցման սարքը պետք է ունենա հետևյալ հատուկ առանձնահատկությունները առնվազն՝

- Ավտոմատ լարման կարգավորում (AVR) – Լարման տատանումների կառավարում առանց մարտկոցի

սպառման

- SmartConnect – Հեռակառավարման հարթակ՝ վեբ մոնիտորինգի համար

- Էներգիայի մոնիտորինգ – kWh սպառման հաշվարկ

- Կանխատեսելի խափանումների ազդանշում – Վաղ նախազգուշացում հնարավոր խնդիրների համար

- Hot-Swappable մարտկոցներ – Մարտկոցի փոխարինում առանց սարքերի անջատման

Երաշխիքային ապահովում և սպասարկում

Երաշխիքային սպասարկում և պայմաններ

- Սարքավորումների համար երաշխիքային սպասարկում մեկ տարի (երաշխիքային սպասարկման

ապահովումը պետք է կատարվի արտադրողի պաշտոնական սպասարկման առնվազն երկու սերվիս կենտրոնում

(Սպասարկումը՝ ք. Երևան, Կոմիտասի պ. 49/2, սենյակ 102, 105, և ք. Երևան Կոմիտաս 49)

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Շրջակա միջավայրի նախարարության

Էկոպարեկային ծառայություն

ք.Երևան, Արմենակյան 129

ՖՆ գործառնական վարչություն

ՀՀ 900001010538

ՀՎՀ 00476409

<

Շրջակա միջավայրի նախարարության
Էկոպարեկային ծառայության գլխավոր քարտուղար



ԿԱՏԱՐՈՂ

«Էյչ Գրուպ» ՍՊԸ

ՀՎՀՀ 01254973

Բանկ՝ «Արմսվիսբանկ» ՓԲԸ

ՀՀ 2500010488760100

տնօրեն

Կարեն Հարությունյան

/ստորագրություն/

Վ.Տ. ՀԱՅԿ ԳՐՈՒՍ
"H GROUP"
01254973



ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության					Մատակարարման	
Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Չափման միավորը	Միավոր գինը/ՀՀ դրամ	Ընդհանուր գինը/ՀՀ դրամ	Ընդհանուր քանակը	Հասցեն	Ժամկետը**
1	դրամ	75 000 000	75 000 000	1	Ք. Երևան Ա. Արմենակյան 129 շենք	Ծառայության մատուցումն իրականացվում է պայմանագրին ուժի մեջ մտնելուց հետո 2 ամսվա ընթացքում, բայց ոչ ուշ մինչև 25.12.2025թ


* Ծառայությունների մատուցման ժամկետը, իսկ փուլային ձևով պայմանագրի կատարման դեպքում՝ առաջին փուլի ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ծառայությունները մատուցել ավելի կարճ ժամկետում

** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկը սահմանվում է օրացուցային օրերով՝ հաշվարկն իրականացնելով ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից :

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ԿԱՏԱՐՈՂ

ք.Երևան, Արմենակյան 129
 ՖՆ գործառնական վարչություն
 ՀՀ 900001010538
 ՀՎՀՀ 00476409
 Շրջակա միջավայրի նախարարության
 Էկոպարեկային ծառայության գլխավոր քարտուղար



«Էլչ Գրուպ» ՍՊԸ
 ՀՎՀՀ 01254973
 Բանկ՝ «Արմսվիսբանկ» ՓԲԸ
 ՀՀ 2500010488760100



ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

«Հ դրամ»

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	48211240	վարչարարության համակարգչային ծրագրային փաթեթներ	0	0	0	75 000 000	75 000 000	75 000 000	75 000 000	75 000 000	75 000 000	75 000 000	75 000 000	75 000 000	75 000 000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Շրջակա միջավայրի նախարարության
 Էկոպարեկային ծառայություն
 ք. Երևան, Արմենակյան 129
 ՖՆ գործառնական վարչություն
 ՀՀ 900001010538
 ՀՎՀՀ 00476409
 Շրջակա միջավայրի նախարարության
 Էկոպարեկային ծառայության գլխավոր քարտուղար



ԿԱՏԱՐՈՂ

«Էլչ Գրուպ» ՍՊԸ
 ՀՎՀՀ 01254973
 Բանկ՝ «Արմսվիսբանկ» ՓԲԸ
 ՀՀ 2500010488760100

տնօրեն
 Կարեն Հարությունյան



Պայմանագրի կողմ

Պատվիրատու

գտնվելու վայրը _____

հհ _____

հվհհ _____

գտնվելու վայրը _____

հհ _____

հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« _____ » _____ 20__թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « _____ » « _____ » 20__թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « _____ »
« _____ » 20__թ. դուրս գրված N _____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը
հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

Մատուցված ծառայությունների								
N	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի /
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

Ծառայությունն ընդունեց

ստորագրություն

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

ազգանուն, անուն
Կ.Տ.

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____ -ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____ -ի
Կատարողի անունը Պատվիրատուի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20__թ. _____ -ին կնքված N
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի

համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20__թ. _____ -ին հանձնման-ընդունման
նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ազգանուն, անուն

ստորագրություն

ստորագրություն